ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 փետրվարի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

13
(3222)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ո՞Վ Է ԵՂԵԼ ԿՈՆՋՈՐՅԱՆԻ ԵՂԲՈՐԸ ՄԵՂԱԴՐՈՂ ԴԱՏԱԽԱԶԸ

Ով է եղել Կոնջորյանի եղբորը մեղադրող դատախազը, ինչ է ասել Կոնջորյանի եղբայրը դատարանում:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նա երկար տարիներ աշխատել է ինչպես դատախազությունում, այնպես էլ ՀՀ քննչական կոմիտեում, սակայն վերջին պաշտոնը եղել է ՀՀ արդարադատության նախարարությունում:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել էր Հայկ Կոնջորյանի եղբոր՝ Ավետ Արսենի Կոնջորյանի վերաբերյալ քրեական գործի նյութերը, որոնք հրապարակված են «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում: Գագիկ Մեսրոպյանը մեղադրվում է այն բանում, որ նա, զբաղվելով բնակարանների առքուվաճառքով, Ա.Մկրտչյանի վստահությունը չարաշահելով, բնակարանը վաճառելու պատրվակով նրանից խաբեությամբ մաս-մաս, իբր բնակարանի կանխավճար, հափշտակել է 6000 ԱՄՆ դոլար գումար, այնուհետեւ տեսնելով, որ Ա.Մկրտչյանը այլեւս իրեն չի վստահում, նախնական համաձայնության գալով Ավետ Կոնջորյանի հետ, 2009թ. սեպտեմբերից հոկտեմբերի կեսերն ընկած ժամանակահատվածում, կրկին չարաշահելով Ա.Մկրտչյանի վստահությունը, խաբեությամբ, մաս-մաս նրանից հափշտակել է 5000 ԱՄՆ դոլար գումար, որից հետո Արտակ Ստեփանյանին Ա.Մկրտչյանին ներկայացնելով որպես բնակարանի իրական սեփականատեր ոմն Հայկի եղբայր, նրանից խաբեությամբ հափշտակել են եւս 4000 ԱՄՆ դոլար:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



Վերջերս ՀՀ կառավարությունը հաստատեց մի որոշում, որով նախատեսվում է ֆինանսական միջոցներ հատկացնել Ստրասբուրգում գտնվող Եվրոպայի Խորհրդարանի վարչական շենքի հարակից տարածքում հուշարձանի տեղադրման համար: Հիմնավորման համաձայն՝ Եվրոպայի Խորհրդարանի վարչական շենքի հարակից տարածքում Հայոց այբուբենի հուշարձանը տեղադրելու համար պայմանավորվածություն է ձեռք բերվել ԵԽ նախագահի հետ: Այսպիսով, ArmLur.am-ը տեղեկանում է, որ Հայոց այբուբենի հուշարձանը Ստրասբուրգում տեղադրելու համար Ազգային Ժողովը տրամադրել է 16 մլն դրամ «Գրիգորյան Լիաննա Մարկլեն» ԱՁ-ին գեղարվեստական քանդակի ձեռք բերման համար: Համաձայն պայմանագրի՝ 9,6 մլն դրամը Ազգային Ժողովը պարտավոր է փոխանցել պատվիրատուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Պայմանագիրը կնքվել է մեկ անձից գնման եղանակով: «Գրիգորյան Լիաննա Մարկլեն» ԱՁ-ն մինչ այս որեւէ պետական գնման չի մասնակցել:

Սահմանադրական դատարանի դատավոր Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցվել են նրա վերաբերյալ մեղադրական դատավճռի հիմքով: Հրայր Թովմասյանի վերաբերյալ կայացված մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 20-ին երկու դրվագով մեղավոր էր ճանաչել Հրայր Թովմասյանին արդարադատության նախարար աշխատած ժամանակահատվածում պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար եւ նրան ազատել քրեական պատասխանատվությունից վաղեմության ժամկետները անցած լինելու հիմքով: Դատավճռի դեմ դատախազը վերաքննիչ բողոք էր ներկայացրել, իսկ պաշտպանները խնդրել էին ճանաչել Թովմասյանի անմեղությունը: Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը մերժել էր բողոքները եւ դատավճիռն անփոփոխ թողել:

⇨ *էջ 4*



ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Կաթողիկոսին մեղադրանք առաջադրած քննիչը Արա Ավագյան է, որը նախկինում աշխատել է Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում, իսկ այսօր ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ վարչության քննիչ է: ՀՀ դատախազությունը քրեական հետապնդում է հարուցել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի նկատմամբ, նրա ելքը երկրից արգելվել է: «Այսօր աննախադեպ իրադարձություն է եղել: ՀՀ դատախազությունը քրեական հետապնդում է հարուցել Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ՝ Արման Սարոյանի հետ կապված դատական ակտի կատարմանը խոչընդոտելու մեղադրանքով: Արգելվել է Վեհափառ Հայրապետի ելքը Հայաստանից, ինչով փորձ է արվում ձախողել Ավստրիայում կայանալիք եպիսկոպոսաց ժողովը: Սա պատմական ամոթալի գործողություն է իշխանության կողմից»,- գրել է փաստաբան Արա Զոհրաբյանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ԶՐՈՒՅՑ

«ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿԱՇԿԱՆԴՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ»

2026 թվականի խորհրդարանական ընտրությունները դեռ ակտիվ փուլ չեն մտել, սակայն ակտիվացել են քաղաքականություն մուտք գործելու հայտ ներկայացրած ուժերը:

ArmLur.am-ը առաջիկա քաղաքական զարգացումների, նոր ձեւավորվող ուժերի մասին զրուցել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանի հետ:

-Պարոն Աբրահամյան, ընդդիմադիր ուժերը ներկայացնում են վարչապետի իրենց թեկնածուներին, մի կողմից «Մեր ձեւով»-ը ներկայացնում է Սամվել Կարապետյանին, մյուս կողմից վարչապետի թեկնածու առաջադրում են Գագիկ Ծառուկյանին:

Այս մասով որքա՞ն եք համարում աջակցությունը արտախորհրդարանական ընդդիմության ձեր նկատմամբ, եւ արդյոք ընդդիմության շանսերը իշխանության նկատմամբ ավելանում են այս ֆոնին:

-Քարոզչական ժամանակահատվածը բուն օրենքով նախատեսված թեեւ չի սկսել, բայց բնական է, որ ընտրություններից 4 ամիս առաջ տարբեր քաղաքական ուժեր ոչ միայն դիրքավորում եւ վերադիրքավորվում են, այլ ցույց են տալիս այն մարտավարությունը եւ այն ճանապարհը, որով շարժվելու են, եւ բնականաբար, այս ընթացքը ես նորմալ եմ համարում՝ անկախ այն հանգամանքից, որ սա ուղեկցվում է իշխանական կողմից հակաօրինական, բավականին մեծ գործողություններով՝ սկսած քաղաքական հետապնդումներից մինչեւ Մայր Աթոռ-ի նկատմամբ հարձակումներով:

Այս պահին էլ տարբեր հոգեւորականներ խղճի բանտարկյալի կարգավիճակում են, բայց պետք է արձանագրել, որ բնական է որոշակի աժիոտաժը, որը մինչեւ հունիսի 7-ը շատ ավելի ինտենսիվ բնույթ է կրելու:

-Պարոն Աբրահամյան, նշեցիք այն քաղաքական ճնշումները, որոնք գործադրվում են այն քաղաքական գործիչների նկատմամբ, որոնք քաղաքական հայտ են ներկայացնում, այդ թվում նաեւ կալանքի տակ են գտնվում: Արդյոք նաեւ եկեղեցու դեմ ուղղված այս քայլերը քաղաքական քարոզչություն չեն, քանի որ երբ Վեհափառը ասաց, որ Եպիսկոպոսաց ժողովը Հայաստանից դուրս ենք հանում, կաթողիկոսին պարզապես մեկ քայլով արգելեցին լքել Հայաստանը: Արդյոք սա իրենց իմիջը բարձրացնելու քայլ չէ:

-Ես կարծում եմ, որ Մայր Աթոռի դեմ գործողությունների հիմքում երկու պատճառ կա: Առաջինը դա ադրբեջանական պահանջներն են, որոնք կուլիսներում անընդհատ քննարկվում են, բնականաբար նրանց համար չի կարող խանգարող հանգամանք լինել այն, որ Հայաստանի իշխանության այսպիսի արտաքին քաղաքականության պայմաններում, երբ Հայաստանի կենսական շահերն արտահայտող մոտեցումները օրակարգում չեն, Մայր Աթոռ-ը տարբեր միջազգային հարթակներում բարձրաձայնում է:

Դա սկսվում է Արցախի հետ կապված հարցերից մինչեւ Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման հետ կապված հարցեր, եւ կարծում եմ, որոնք նաեւ հրապարակային են արտահայտված դաշտում, ադրբեջանցիները այստեղ ունեն որոշակի նկատառումներ, իսկ Հայաստանի իշխանությունը փորձում է իր այս վարքով նաեւ այդ խնդիրը լուծել ադրբեջանցիներին բավարարելու եւ ցույց տալու համար, որ այս նախապայմանը ամրագրված չէ առ այս պահը:

Երկրորդ հանգամանքը Մայր Աթոռի հեղինակությունն է: Փաշինյանը ցույց է տվել, որ կաշկանդվածություն ունի եւ խնդիր ունի բոլոր այն կառույցների եւ գործիչների հետ, ովքեր ունեն հեղինակություն, եւ փորձում է ինստիտուտների թիրախավորման միջոցով, իրենց այսպես ասած, վարկաբեկել բոլոր այն մարդկանց, մի մասին ազատությունից զրկելով մյուս մասին դատական քաշքշուքների տանելու ձեւով, եւ դա այս վերջին 6 ամսվա ընթացքում արտահայտվել է:

-Ըստ Ձեզ՝ կարո՞ղ է բանը հասնել նրան, որ Կաթողիկոսին կալանավորեն:

-Որեւէ մեկը չի կարող բացառել, որովհետեւ այս իշխանության համար որեւէ սահմանափակում չկա, որեւէ կարմիր գիծ չկա:

Շատ ժամանակ նրանց էմոցիաներն են թելադրում, թե ինչպես նրանք առաջնորդվեն, բայց ինքս կարծում եմ, որ եւ Կաթողիկոսը, եւ հոգեւորականները բոլորը պատրաստ են եղել իրավիճակի այդպիսի զարգացումների:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՔՊ–ԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ

Armlur.am-ը տեղեկացավ, որ երեք օր ՔՊ կենտրոնական գրասենյակում կայացած 2026 թվականի հերթական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հաստատման առաջին փուլի քվեարկությանը մասնակցել է 1028 պատվիրակ:

Մենք տեղեկացանք, որ մասնակցության իրավունք ունեցել է 1061 ընտրող, մասնակցել է քվեարկությանը 1028 ընտրող, վավեր է եղել 932 թերթիկ, անվավեր՝ 96 թերթիկ:

Հիշեցնենք, որ դեռեւս հունվարի 23-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Նիկոլ Փաշինյանը մտադիր է երկար եւ բազմափուլ գործընթացի միջոցով ընտրել 2026 թվականի ընտրություններին մասնակցող ՔՊ առաջատարներին՝ գործընթացը պահելով խիստ ներքին մրցակցության դաշտում:

Նախատեսվում է, որ ամբողջ ընտրական շղթան՝ 280-ից մինչեւ 50-ի կրճատումը, իրականացվելու է «Քաղաքացիական պայմանագիր»-ի ներսում՝ պատվիրակների քվեարկությունների միջոցով, որտեղ վճռորոշ դեր կունենա ոչ միայն քաղաքական անցյալը, այլեւ քարոզչական արդյունավետությունը:

Հաջորդ փուլում արդեն 50 հոգանոց ցուցակը կուղարկեն հաջորդ փուլ՝ մարզային եւ ներհամայնքային քարոզչության, որի արդյունքներով էլ վերջնականապես կձեւավորվեն ցուցակի առաջին 50 տեղերը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՏԱՎՃԻՌ

Բաքվում պատանդառված եւ գերության մեջ գտնվող բարերար ու Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի դեմ շինծու մեղադրանքով դատական նիստը կշարունակվի փետրվարի 17-ին, որի ժամանակ էլ հրապարակվելու է Ռուբեն Վարդանյանի դատավճիռը:

Ի՞նչ վճիռ կիրապարակի Բաքուն՝ կարելի է ենթադրել նախորդ՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ ընդունած վճիռներից:

Հիշեցնենք, որ Բաքվի գլխավոր դատախազը Ռուբեն Վարդանյանի նկատմամբ եւս պահանջել էր կիրառել ցմահ ազատազրկում:

Նշենք, որ փետրվարի 10-ին տեղի ունեցած դատավարությունն ավարտվել է դատական քննության ավարտի մասին հայտարարությամբ, որից հետո դատավորների կազմը հեռացել է խորհրդակցական սենյակ:

Հիշեցնենք նաեւ այն, որ Բաքուն Ռուբեն Վարդանյանին մեղադրում է Ադրբեջանի դեմ պատերազմական գործողությունները հովանավորելու համար:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է

Ինդոնեզիան պատրաստվում է 1000 զինվորականի տեղակայել Գազայում մինչեւ 2025թ.-ի ապրիլի սկիզբ՝ որպես բազմազգ խաղաղապահ ուժերի մաս: Ինչպես տեղեկանում ենք Reuters-ից, այս մասին փետրվարի 16-ին հայտարարել է բանակի խոսնակ Դոնի Պրամոնոն: Նա նշել է, որ զինվորականների տեղակայման վերաբերյալ վերջնական որոշումը կկայացնի Ինդոնեզիայի նախագահ Պրաբովո Սուբիանտոն՝ հավելելով, որ մինչեւ հունիս ընդհանուր առմամբ 8000 զինվորական պատրաստ կլինի տեղակայման: «Մեկնման ժամանակացույցը ամբողջությամբ կախված է պետության քաղաքական որոշումներից եւ համապատասխան միջազգային մեխանիզմներից»,-ասել է նա:

Ինդոնեզիայի նախագահ Պրաբովոն պատրաստվում է մեկնել Վաշինգտոն՝ մասնակցելու ԱՄՆ նախագահությամբ այս շաբաթ կայանալիք խաղաղության խորհրդի առաջին պաշտոնական հանդիպմանը:

Խորհրդի ստեղծումը հաստատվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւով՝ որպես Թրամփի վարչակազմի՝ Իսրայելի եւ պաղեստինյան ՀԱՄԱՍ խմբավորման միջեւ Գազայում պատերազմը դադարեցնելու ծրագրի մի մաս:

Ինդոնեզիայի արտաքին գործերի նախարարությունը փետրվարի 14-ին հայտարարել է, որ իր զինվորականների մասնակցությունը Գազայում ՄԱԿ-ի կողմից լիազորված Միջազգային կայունացման ուժերին չպետք է մեկնաբանվի որպես որեւէ կողմի հետ քաղաքական հարաբերությունների կարգավորում:

«Ինդոնեզիան հետեւողականորեն մերժում է ցանկացած ձեւով պաղեստինցի ժողովրդի դեմոգրաֆիկ փոփոխության կամ հարկադիր տեղահանման կամ վերաբնակեցման բոլոր փորձերը»,-հայտարարել է նախարարությունը: Նաեւ նշել է, որ տեղակայումը, որն ունի ոչ մարտական, մարդասիրական մանդատ, կարող է իրականացվել միայն Պաղեստինի իշխանությունների համաձայնությամբ, եւ որ Ինդոնեզիայի զորքերը նաեւ որեւէ կողմի ապառազմականացնելու մանդատ չեն ունենա:

Ինդոնեզիան չի ճանաչում եւ չի պահպանում որեւէ դիվանագիտական հարաբերություններ Իսրայելի հետ:

ՍՏԱՑԵԼ Է

Ճապոնիան եւ Կանադան Extraordinary Revenue Acceleration (ERA) ծրագրի շրջանակում Ուկրաինային են տրամադրել 690 միլիոն դոլար: Այս մասին հայտնել է Ուկրաինայի ֆինանսների նախարարությունը: ERA-ն Մեծ յոթնյակի՝ G7-ի ծրագիրն է, որը ֆինանսավորվում է սառեցված ռուսական ակտիվներից ստացված եկամուտներով: Միջոցները տրամադրվել են որպես դրամաշնորհ Համաշխարհային բանկի միջոցով: Դրանք ERA-ի ընդհանուր 50 միլիարդ դոլարի ֆինանսավորման փաթեթի մաս են կազմում: Ճապոնիան ներդրել է 544 միլիոն դոլար, իսկ Կանադան՝ 146 միլիոն դոլար:

Ուկրաինայի ֆինանսների նախարարությունը հիշեցրել է, որ փետրվարի 6-ին նախարարությունը եւ Համաշխարհային բանկը համաձայնագիր էին ստորագրել «Ուկրաինայում կայուն պետական կառավարման պետական ծախսերի աջակցություն» (PEACE in Ukraine) նախագծի շրջանակում դրամաշնորհային միջոցներ տրամադրելու վերաբերյալ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԵՐՔԵԼ Է

Ռուսաստանը կտրականապես հերքում է ռուս ընդդիմադիր գործիչ Ալեքսեյ Նավալնիի թունավորման շուրջ մեղադրանքները եւ դրանք համարում է անհիմն: Ինչպես հաղորդում «ՌԻԱ Նովոստի»-ն, այս մասին հայտարարել է Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը: Լրագրողները Պեսկովին հարց են ուղղել Նավալնիի հավանական թունավորման վերաբերյալ վերջին հայտարարության մասին, ինչին ի պատասխան՝ ՌԴ նախագահի խոսնակն ասել է. «Մենք, բնականաբար, չենք ընդունում նման մեղադրանքները: Մենք համաձայն չենք դրանց հետ: Մենք դրանք համարում ենք կողմնակալ եւ անհիմն: Եւ մենք կտրականապես մերժում ենք դրանք»: Ավելի վաղ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Մարիա Զախարովան եւս, մեկնաբանելով Նավալնիի թունավորման հետ կապված մեղադրանքները, հայտարարել էր, որ դրանք հայտնի ամերիկացի ֆինանսիստ Ջեֆրի Էփշթեյնի ֆայլերից հանրության ուշադրությունը շեղելու փորձ են: Հինգ երկրներ՝ Մեծ Բրիտանիան, Շվեդիան, Ֆրանսիան, Գերմանիան եւ Նիդեռլանդները, հայտարարել են, որ ռուս ընդդիմադիր գործիչ Ալեքսեյ Նավալնին սպանվել է բանտում հատուկ թույնի կիրառմամբ, ինչը Ռուսաստանի կողմից քիմիական զենքի մասին Կոնվենցիայի խախտում է:

Մի քանի անկախ լաբորատորիա Նավալնիի ընտանիքի կողմից դուրս բերված նմուշներում հայտնաբերել է էպիբատիդին՝ հարավամերիկյան Epipedobates tricolor գորտի մաշկից ստացվող խիստ թունավոր նյութ: Էպիբատիդինը նեյրոտոքսին է, որն ազդում է նիկոտինային ու մուսկարինային ացետիլխոլինային ռեցեպտորների վրա: Այս ռեցեպտորները ներգրավված են ցավի փոխանցման, ինչպես նաեւ շարժման ու այլ ֆունկցիաների մեջ: Էպիբատիդինը առաջացնում է ամբողջ մարմի զգայունության կորուստ, որը կարող է արագորեն զարգանալ մինչեւ լիակատար կաթվածահարություն ու շնչառության դադարեցում: Նավալնին մահացել էր բանտում 2024 թ. փետրվարին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Շվեյցարիայի Ժնեւ քաղաքում ավարտվել է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր տնօրեն Ռաֆայել Գրոսիի եւ Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչիի հանդիպումը: Այս մասին Գրոսին գրել է X միկրոբլոգի իր էջում: «Ավարտեցի Իրանի արտաքին գործերի նախարար Արաղչիի հետ խորը տեխնիկական քննարկումները՝ վաղը Ժնեւում նախատեսված կարեւոր բանակցությունների շրջանակում»,- նշել է նա: Ավելի վաղ Իրանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել էր, որ Աբբաս Արաղչին Թեհրանից մեկնել է Ժնեւ՝ մասնակցելու Իրանի միջուկային ծրագրի շուրջ ԱՄՆ-ի հետ միջնորդավորված բանակցությունների երկրորդ փուլին, ինչպես նաեւ առանձին դիվանագիտական հանդիպումներ անցկացնելու նպատակով: Նախարարության հայտարարության մեջ նշվել է, որ բանակցությունները նախատեսված են փետրվարի 17-ին եւ կանցկացվեն Օմանի միջնորդությամբ:

Փետրվարի սկզբին Իրանը եւ ԱՄՆ-ն վերսկսել են բանակցությունները՝ Թեհրանի միջուկային ծրագրի շուրջ տասնամյակներ շարունակվող վեճը լուծելու եւ նոր ռազմական բախումը կանխելու նպատակով:

ԿԵՂԾ ԷՐ

ԱՐՇԱԿ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐԸ

ArmLur.am-ին բացառիկ մանրամասներ են հայտնի դարձել Արշակ Սրբազանին վերագրվող տեսանյութերի փորձաքննություններից: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նրան վերագրվող աղմկահարույց տեսանյութի մասով փորձաքննություններ են նշանակվել Սերբիայում, Չեռնոգորիայում եւ Չեխիայում:

Երեկ փաստաբան Արսեն Բաբայանը հայտնել էր. «Արշակ Սրբազանին վերագրվող տեսանյութերը ԿԵՂԾ են:

Ստացել եմ դեռեւս նախորդ տարվա նոյեմբերին իմ կողմից նշանակված միջազգային փորձաքննությունների արդյունքները՝ Արշակ սրբազանին վերագրվող հայտնի տեսագրությունների իսկության պարզման նպատակով:

Երեք տարբեր պետություններից ստացված փորձագիտական եզրակացությունները հաստատում են սրբազանի այն պնդումը, որ նա որեւէ առնչություն չունի տեսագրությունների բովանդակության հետ:

Փորձագետները, ի թիվս այլնի, հանգել են հետեւյալ եզրակացություններին՝

1. Տեսագրության բովանդակությունը կեղծ է եւ ստեղծվել է հատուկ ծրագրային միջոցների կիրառմամբ,

2. Տեսարանները օբյեկտիվ իրականության մեջ գոյություն չեն ունեցել,

3. Տեսագրության մեջ երեւացող անձանց հավաստի նույնականացում կատարելն անհնարին է:

Առկա են նաեւ այլ կարեւոր եզրահանգումներ, որոնք հիմնավոր կերպով վկայում են կեղծարարության մասին:

Մոտակա օրերին կհրավիրեմ մամուլի ասուլիս՝ միջազգային փորձագիտական եզրակացությունները հանրությանը ներկայացնելու եւ դրանց մանրամասները հրապարակելու նպատակով»:

ArmLur.am-ը փաստաբան Արսեն Բաբայանից փորձեց մեկնաբանություն ստանալ՝ արդյոք վերոնշյալ երկրներում են նշանակված եղել փորձաքննությունները, վերջինս նշեց, որ մանրամասները կհայտնի մամլո ասուլիսին:

Ի դեպ, մեզ հայտնի դարձավ, որ վերջինս այս պահին Չեխիայում է, ինչը ենթադրել է տալիս, որ այցը կապված է նշանակված փորձաքննության հետ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻԵԴ–Ի ՊԱՀԱՆՋԸ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) քննության է ընդունել ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունքների խախտման մասին գանգատը եւ այն պաշտոնապես հաղորդել է ՀՀ կառավարությանը՝ պահանջելով ներկայացնել դիրքորոշում: Այս մասին հայտարարություն է տարածել Տոնոյանի պաշտպանական խումբը:

«Դիմումը քննության է ընունվել «well-established case-law» ընթացակարգով, ինչը նշանակում է, որ դրանում բարձրացված հարցերը վերաբերում են այնպիսի իրավախախտումների, որոնց առնչությամբ Եվրոպական դատարանն արդեն ձեւավորել է կայուն եւ հաստատված նախադեպային իրավունքի շրջանակ: Այլ կերպ ասած՝ նմանատիպ իրավիճակներում խախտումները նախկինում բազմիցս արձանագրվել են դատարանի կողմից, եւ առկա է ձեւավորված իրավական գնահատական»,-ընդգծել են Տոնոյանի փաստաբանները:

Փաստաբանների գանգատը վերաբերում է կալանքի իրավաչափությանը, տեւողության հիմնավորվածությանը, դատարանների որոշումների պատճառաբանվածությանը, իրավական որոշակիության եւ կողմերի հավասարության սկզբունքների պահպանմանը:

Տոնոյանի պաշտպանական խումբը նշել է, որ այս փուլում քննությունը վերաբերում է բացառապես կոնվենցիայի ենթադրյալ խախտումներին եւ չի առնչվում մեղավորության հարցին, ինչպես նաեւ չի կանխորոշում դատավարության արդյունքը:

«Հարկ ենք համարում հատուկ շեշտադրել նաեւ այն, որ ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես վարույթ է ընդունել պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի վերաբերյալ գործով նույնաբնույթ հարցի վերաբերյալ վճռաբեկ բողոք, սակայն արդեն մեկ տարուց ավելի է, ինչ հիշյալ վճռաբեկ բողոքի վերաբերյալ որոշում չի կայացվել: Դատական գործընթացը ՀՀ-ում շարունակվում է»,-ընդգծել են Տոնոյանի փաստաբանները:

Հիշեցնենք՝ 2021-ի սեպտեմբերի 30-ին ԱԱԾ-ն հայտնեց, որ Դավիթ Տոնոյանն ու զենքի մատակարարմամբ զբաղվող Դավիթ Գալստյանը ձերբակալվել են առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու կասկածանքով:

ՑՈՒՑԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ

Հայաստանում կայանալիք խորհրդարանական ընտրություններում «Ուժեղ Հայաստան» կուսակցության նախընտրական ցուցակի առաջին համարը կլինի «Մեր ձեւով» շարժման համակարգող Նարեկ Կարապետյանը՝ անցումային համակարգողի կարգավիճակով:

Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Գոհար Մելոյանը:

««Ուժեղ Հայաստան» կուսակցության ցուցակի 1-ին համարում հանդես կգա Նարեկ Կարապետյանը՝ անցումային համակարգողի կարգավիճակով»,- գրել է Մելոյանը:

«Ուժեղ Հայաստան» կուսակցության համագումարի ժամանակ հայտարարվել է, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններում նորաստեղծ քաղաքական ուժի վարչապետի թեկնածուն կլինի կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանը: Սամվել Կարապետյանը, սակայն, Հայաստանի գործող օրենսդրությամբ չի կարող լինել ո՛չ պատգամավորի, ո՛չ վարչապետի թեկնածու, քանի որ չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 148-րդ հոդվածով պատգամավորի եւ կառավարության անդամի թեկնածուի համար սահմանված պահանջներին: Սամվել Կարապետյանը, բացի Հայաստանի քաղաքացիությունից, ունի նաեւ այլ երկրների քաղաքացիություն, իսկ ՀՀ Սահմանադրության 148-րդ հոդվածը սահմանում է, որ պատգամավորի թեկնածու կարող է լինել 25 տարին լրացած, վերջին 4 տարում միայն Հայաստանի քաղաքացի հանդիսացող, վերջին 4 տարում մշտապես Հայաստանում բնակված անձը: Կուսակցության համագումարի ընթացքում հայտարարվել էր, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը ընտրություններում հաղթելու եւ խորհրդարանում մեծամասնություն ստանալու դեպքում հանդես կգա օրենսդրական փոփոխություններով, որոնց արդյունքում Սամվել Կարապետյանը կկարողանա ստանձնել վարչապետի պաշտոնը: Համագումարի ընթացքում հրապարակվել էին մի խումբ սահմանադրագետների կարծիքներ այն մասին, որ ՀՀ Սահմանադրության 148-րդ հոդվածը անփոփոխելի հոդված չէ, եւ հնարավոր է Ազգային Ժողովի քվեարկությամբ՝ առանց համապետական հանրաքվեի, փոփոխություններ կատարել այդ հոդվածում:

ԶԱՐՄԱՆԱԼԻ ՈՐՈՇՈՒՄ

ԵՆԹԱԴՐՅԱԼ ՄԱՐԴԱՍՊԱՆԻՆ ԱԶԱՏ ԵՆ ԱՐՁԱԿԵԼ

Ուշագրավ իրավիճակ Պաշտպանության նախկին փոխնախարարին սպանելու դեպքով. ենթադրյալ մարդասպանին դատարանը ազատ է արձակել:

Նախ ամենասկզբից:

2025 թվականի հուլիսի 25-ին ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնեց, թե բացահայտվել է Վահրամ Խորխոռունու սպանությունը: 28 տարի առաջ տեղի ունեցած սպանության բացահայտումը ՀՀ մեծ աղմուկ բարձրացրեց, թե ինչպես է նախաքննական մարմնին հաջողվել այն բացահայտել:

Եւ ահա, ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնել էր. «Ս.Ա.-ն հանդիսանալով զինծառայող, նպատակադրվել է շահադիտական շարժառիթով կազմակերպել ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարար Վահրամ Խորխոռունու սպանությունը:

1998 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին այդ կապակցությամբ Ս.Ա.-ն պայմանավորվածություններ է ձեռք բերել Լեռնային Ղարաբաղի բնակիչներ Հ.Ն.-ի եւ Ա.Ա.-ի հետ եւ սպանություն կատարելու համար նրանց առաջարկել է համապատասխանաբար 10 հզր ԱՄՆ դոլար եւ 15 հզր ԱՄՆ դոլար գումար»:

Ըստ Կոմիտեի՝ համաձայն նախնական դերաբաշխման՝ Հ.Ն.-ն սպասել է ավտոմեքենայում, իսկ Ս.Ա.-ն եւ Ա.Ա.-ն գտնվել են շենքի մուտքի մոտ: 1998 թվականի դեկտեմբերի 10-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, երբ Վահրամ Խորխոռունին իր բնակարան գնալու համար մտել է շենքի մուտք, առաջին հարկի աստիճանահարթակում Ս.Ա.-ն եւ Ա.Ա.-ն, հանդես գալով որպես համակատարողներ, փոխլրացնելով միմյանց գործողությունները, Վահրամ Խորխոռունուն սպանելու դիտավորությամբ իրենց մոտ ապօրինի պահվող, 9մմ տրամաչափի ատրճանակային փամփուշտներ կրակելու համար վերափոխված՝ ինքնաշեն փող եւ խլացուցիչ ունեցող վերը նշված հրազենից նրա ուղղությամբ արձակել են հինգ կրակոց, որոնցից երեքը դեմքի, իսկ երկուսը՝ ձախից կրծքավանդակի թիկնային մակերեսի շրջաններին, ինչի հետեւանքով վերջինս տեղում մահացել է:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված հանցանքի կատարումը վկայող բավարար փաստերի հիմքով Ս.Ա.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով (շահադիտական դրդումներով կատարված սպանությունը) եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով (հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը):

Վերջինս ձերբակալվել է, իսկ ահա ավելի ուշ դատարանի որոշմամբ կալանավորվել:

Արդյունքում, նախաքննական մարմինը գործով նախաքննության ավարտ էր հայտարարել եւ գործը ուղարկել էր դատարան:

Դատարանում իրավիճակ է փոխվում

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ գործը դատարան ուղարկվելուց հետո ձերբակալված, այնուհետեւ կալանավորված Սասուն Առուշանյանի բանտային կալանքը փոխարինվել է տնային կալանքով, իսկ օրեր առաջ, ահա, գործը քննող դատավոր Արտակ Կարապետյանը կալանքը վերացրել է եւ վերջինիս նկատմամբ սահմանել է վարչական հսկողություն: Այսինքն՝ ենթադրյալ մարդասպանը, ցմահ ազատազրկման դատապարտման սպառնալիքով կատարված հանցագործության մեջ մեղադրվող անձն այժմ ազատության մեջ է: Այս գործով մեղադրվողի պաշտպանները քրեական վարույթով որեւէ մեկնաբանություն չեն տալիս՝ նշելով միայն, որ Առուշանյանը չի ընդունում մեղադրանքը: ArmLur.am-ին հաջողվեց կապ հաստատել Խորխոռունու որդու հետ, ով հաստատեց մեր տեղեկությունները, սակայն հրաժարվեց պատասխանել մեր լրացուցիչ հարցերին:

Հայտնի դատավորն ու զարմանալի որոշումը

Ինչպես արդեն հայտնեցինք, Խորխոռունու սպանության գործով ենթադրյալ մարդասպանին ազատ է արձակել Երեւան քաղաքի դատավոր Արտակ Կարապետյանը: Նկատենք, Արտակ Կարապետյանը այն դատավորն է, որը գործարար Սամվել Կարապետյանին «Մեր Ձեւով» արտահայտության համար կալանքի տարավ, իսկ ահա աղմկահարույց սպանության գործով ենթադրյալ մարդասպանին ազատ է արձակում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՃԻՌԸ ՈՒԺԻ ՄԵՋ Է

Գլխավոր դատախազությունը 2025 թվականի հոկտեմբերի 6-ին տեղեկացրել էր, որ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանն անփոփոխ է թողել ՀՀ արդարադատության նախկին նախարար Հրայր Թովմասյանի վերաբերյալ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը՝ մեղավոր ճանաչելով նրան 18.04.2003 թվականին ընդունված՝ Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ. մեղսագրված արարքները վերաբերել են Հրայր Թովմասյանի կողմից ՀՀ արդարադատության նախարար աշխատած ժամանակահատվածում պաշտոնական լիազորությունները չարաշահելուն:

Հիշեցնենք, որ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 20-ի դատավճռով մեղավոր էր ճանաչել Հրայր Թովմասյանին՝ 18.04.2003 թվականին ընդունված՝ Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ (երկու դրվագ) եւ նրան ազատել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետները 2019 թվականին անցած լինելու պատճառաբանությամբ:

Դատավճռի դեմ դատախազի կողմից ներկայացվել էր վերաքննիչ բողոք՝ արարքների վերաորակման եւ վաղեմության ժամկետի կիրառման մասով, իսկ պաշտպանների կողմից ներկայացվել էին վերաքննիչ բողոքներ՝ խնդրելով ճանաչել Հրայր Թովմասյանի անմեղությունը: Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 30-ին որոշում էր կայացրել բողոքները մերժելու եւ դատավճիռն անփոփոխ թողնելու մասին:

Հակակոռուպցիոն վերաքննիչ քրեական դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 30-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազը, մեղադրյալը եւ նրա պաշտպանը ներկայացրել էին վճռաբեկ բողոքներ:

Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը 2026 թվականի փետրվարի 12-ին որոշում է կայացրել ներկայացված բողոքները վարույթ ընդունելը մերժելու մասին, ինչը նշանակում է, որ Հրայր Թովմասյանի վերաբերյալ կայացված մեղադրական դատավճիռը 2026 թվականի փետրվարի 12-ից մտել է օրինական ուժի մեջ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՎԹԱՐ

Փետրվարի 15-ին ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: ArmLur.am-ը դեպքի վայրում էր:

Ժամը 18:20-ի սահմաններում Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս ավտոճանապարհի 7-րդ կմ հատվածում բախվել են «ԳԱԶ 3110» եւ «Volkswagen» մակնիշի ավտոմեքենաները: Վերջինս բախումից հետո կոտրել է բետոնե սյուներն ու արգելապատնեշները եւ կողաշրջվել:

Shamshyan.com-ն էլ հայտնում է, որ վթարի հետեւանքով վարորդներն ու երեք ուղեւոր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Սեւան» բժշկական կենտրոն: Ավելի ուշ հիվանդանոցից հայտնել են, որ վիրավորներից մեկը, գիտակցության չգալով, մահացել է:

Դեպքի վայրում աշխատել են պարեկային ծառայության եւ համայնքային ոստիկանության ուժերը: Փաստի առթիվ Սեւանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Պարզվում են հանգամանքներն ու տուժածների ինքնությունը:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ

Փետրվարի 12-ին «Բագրատաշեն» սահմանային անցակետով Հայաստան մուտք գործելիս սահմանապահները բռնել եւ Համայնքային ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ծառայողներին են հանձնել Գավառ քաղաքի բնակիչ հետախուզվողի:

Անցած տարվա հոկտեմբերից 35-ամյա տղամարդը հետախուզվում էր որպես կալանքից խուսափող դատապարտյալ:

Նույն օրը նույն կերպ Նոյեմբերյանի համայնքային ոստիկաններին է հանձնվել նաեւ օտարերկրյա քաղաքացի 35-ամյա տղամարդ: Անցած տարվա դեկտեմբերից միջազգային մակարդակով նա հետախուզվում էր Ուկրաինայի իրավապահ մարմինների կողմից՝ խարդախության մեղադրանքով, խափանման միջոցը՝ կալանք:

ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՈՒՄ

Համայնքային ոստիկանության Թումանյանի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Դսեղ գյուղի հարակից անտառում հայտնաբերել են փայտանյութով բեռնված «ՈՒԱԶ» մակնիշի մեքենա: Դսեղ գյուղի բնակիչ 41-ամյա վարորդը հայտնել է, որ բենզասողոցով ապօրինի հատել է հաճարենի տեսակի ծառեր եւ պատրաստել փայտանյութ: Փայտանյութով բեռնված «ՈՒԱԶ»-ը տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք: Ստուգումների արդյունքում պարզվել է, որ ապօրինի ծառահատման հետեւանքով բուսական աշխարհին պատճառվել է 351 000 դրամի վնաս: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: Դսեղ գյուղի բնակիչ 41-ամյա տղամարդը ձերբակալվել է: Նա ներկայացրել է բենզասողոցը: Հանգամանքները պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հանրապետությունում նախորդ շաբաթ բացահայտվել է 159 հանցագործություն, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽԱԽՏԵԼ ԵՆ

Հունվարի 13-ին Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին հարցում եմ արել Գանձաքար-Իծաքար ավտոճանապարհի կառուցապատման վերաբերյալ: Նախարարության պատասխանում նշված է. «Հ36, /Մ4/(Իջեւան)-Նավուր-Բերդ-Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ5+600-կմ42+100 հատվածի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են 2022թ., սակայն որակական եւ ժամկետային պահանջների հետ կապված խնդիրների պատճառով 2023թ. կապալառուի հետ կնքված պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է: 2024թ.-ին իրականացվել է նոր գնման ընթացակարգ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Էկո Բիլդինգ» ՍՊ ընկերությունը: Աշխատանքների ավարտը նախատեսված էր 2025 թ. սեպտեմբերին, սակայն կապալառուն չի կարողացել ժամկետում կատարել պարտավորությունները, ինչի պատճառով աշխատանքների կատարման նոր ժամկետ է սահմանվել 2026թ. մարտ ամիսը: Պարտավորությունների չկատարման համար սահմանված կարգով կապալառուից կգանձվեն տույժեր: Մինչ օրս կատարված եւ ընդունված աշխատանքների արժեքը՝ 2,7 մլրդ դրամ, իսկ 2026թ. իրականացվելիք աշխատանքների արժեքը՝ 0,3մլրդ դրամ: Կապալառու՝ «Էկո Բիլդինգ» ՍՊԸ, պատվիրատու՝ ՀՀ ՏԿԵՆ»:

Նախարար Խուդաթյանին նաեւ հարցրել եմ. «Ե՞րբ է սկսվել Վերին Կարմիրաղբյուր-Չինարի ավտոճանապարհի կառուցապատումը, ո՞ր կազմակերպությունն է այն իրականացնում, ո՞վ է աշխատանքների պատվիրատուն, որքա՞ն գումար է նախատեսված ծրագրով, ի սկզբանե ե՞րբ էր նախատեսված ծրագրի ավարտը, ե՞րբ այն կավարտվի»: Նախարարության պատասխանում գրված է. «Հ-64, Բերդ-Արծվաբերդ-Չինարի հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ2+700-կմ9+700 եւ կմ14+160-կմ16+400 հատվածների հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի ապրիլին: Ավարտը նախատեսվում էր նույն տարվա սեպտեմբերին: Տեղում, տեղանքի իրադրությամբ պայմանավորված, ի հայտ եկած խնդիրներին նախագծային նոր լուծումներ տալու եւ աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտություն է առաջացել, որի պատճառով աշխատանքների ավարտը տեղափոխվել է 2026 թ. ամռան սկիզբ: Մինչ օրս կատարված եւ ընդունված աշխատանքների արժեքը՝ 1 198 428 524 դրամ: 2026-ին իրականացվելիք աշխատանքների արժեքը՝ 433 571 426 դրամ: Կապալառու՝«Էկո Բիլդինգ» ՍՊԸ եւ «ԷՄ Քոնթսրաքշն» ՍՊ կոնսորցիում: Պատվիրատու՝ ՀՀ ՏԿԵՆ»: «Էկո Բիլդինգ» ՍՊԸ-ն խախտել է Հ36, /Մ4/(Իջեւան)-Նավուր-Բերդ-Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ5+600-կմ42+100 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ժամկետային պարտավորությունները, սակայն դրա համար տույժերի ենթարկելու փոխարեն, այդ կազմակերպությանն է տրվել Հ36, /Մ4/(Իջեւան)-Նավուր-Բերդ-Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ5+600-կմ42+100 հատվածի հիմնանորոգման աշխատանքների պատվերը: «Էկո Բիլդինգ» ՍՊԸ -ն միաժամանակ 2 ծրագիր է իրականացնում, երկուսի ժամկետներն էլ խախտվել են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎ

ԻՆՉՊԵ՞Ս Է ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հրավերով փետրվարի 16-ին Ավստրիայի Սանկտ Փյոլթըն քաղաքում գումարվելու է Հայ Առաքելական Եկեղեցու Եպիսկոպոսաց Ժողովը: Չնայած բազմաթիվ ենթադրություններին, Եկեղեցու, հատկապես՝ Վեհափառ Հայրապետի շուրջ ստեղծված իրավիճակին՝ Մայր Աթոռը հաստատակամորեն որոշել է այն անհապաղորեն իրականացնել՝ փետրվարի 16-19-ն ընկած ժամանակահատվածում:

Ժողովի ժամանակ քննարկվելու են եկեղեցական կյանքին եւ օրակարգին վերաբերվող մի շարք հարցեր:

«Թույլ չեմ տալու Կաթողիկոսությունը Հայաստանից դուրս տանել»: Նիկոլ Փաշինյանն այս հայտարարությունը կատարել է փետրվարի 13-ին, ինչից հետո փետրվարի 14-ին՝ շաբաթ օրով, հաջորդեց Վեհափառ Հայրապետի նկատմամբ երկրից դուրս գալու արգելքի սահմանումը:

Ավելի վաղ երկրից դուրս գալու արգելք էր սահմանվել վեց բարձրաստիճան հոգեւորականների նկատմամբ՝ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի, Տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանի, Տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանի, Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի, Տեր Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանի, Տեր Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանի: Եպիսկոպոսները Ժողովին մասնակցելու են հեռավար ձեւաչափով, իսկ ինչպես է մասնակցելու Վեհափառ Հայրապետը՝ առայժմ պարզ չէ:

Հիշեցնենք, որ Եկեղեցական ժողովը հրավիրված էր դեռ դեկտեմբերին, սակայն, հաշվի առնելով եկեղեցու շուրջ ստեղծված լարված իրավիճակը, Մայր Աթոռը որոշեց այն դրսում գումարել: Այս անգամ էլ Վեհափառ Հայրապետին հանգստի կոչողներին դուր չեկավ այն, որ Ժողովը դրսում է հրավիրվել, եւ սկսեցին շահարկել Ժողովի՝ Սուրբ Էջմիածնում չգումարելու հանգամանքը: Սակայն հարկ ենք համարում հիշեցնել այն, որ Եկեղեցական Ժողովի՝ Հայաստանից դուրս գումարելն աննախադեպ երեւույթ չէ. Հայ Առաքելական Եկեղեցին իր պատմության ընթացքում էլի ունեցել է նման դեպքեր, երբ ժողովը դրսում է հրավիրել՝ ինչպես 1651 թվականին Երուսաղեմում, 1956 թվականին Կահիրեում: Նաեւ նկատենք այն, որ Ժողով գումարելու կարեւորությունը ոչ թե վայրն է, այլ այն, թե ում կողմից է հրավիրված Ժողովը եւ ովքեր են մասնակցում Ժողովին:

ՆԱՆԻԿ ՂԱՍՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱԼԻԵՎԸ ՄԵՂԱԴՐԵԼ Է ՌԴ-ԻՆ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել է, որ Ռուսաստանը երեք անգամ հարձակվել է Կիեւում Ադրբեջանի դեսպանատան վրա՝ դա անվանելով «դիտավորյալ հարձակում դիվանագիտական առաքելության վրա»: Այս մասին հայտնում է «Ազերթաջը»:

Ալիեւը մասնակցել է Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում կազմակերպված քննարկմանը: Նրան հարցրել են, թե արդյոք ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի առջեւ բարձրացրել է այն հարցը, որ ՌԴ կողմից Ուկրաինայի վրա հարձակումները հարվածել են նաեւ ադրբեջանական ընկերություններին պատկանող էներգետիկ օբյեկտներին: Ադրբեջանի նախագահը պատասխանել է, որ հարցը «բազմիցս բարձրացվել է արտաքին գործերի նախարարությունների եւ նախագահների աշխատակազմերի մակարդակով պաշտոնյաների միջեւ բազմաթիվ շփումների ընթացքում»: Նա նշել է, որ Ադրբեջանի էներգետիկ ենթակառուցվածքների վրա հարձակումներից բացի, Ուկրաինայում Ադրբեջանի դեսպանատան վրա երեք հարձակում է եղել:

«Առաջին հարձակումից հետո մենք կարող էինք ենթադրել, որ դա պատահականություն է եղել, եւ մենք մեր ռուս գործընկերներին տրամադրել ենք Ադրբեջանի դիվանագիտական առաքելությունների բոլոր կոորդինատները, այդ թվում՝ հյուպատոսական բաժինը, մեր մշակութային կենտրոնները եւ դեսպանատունը: Այս ամենից հետո հաջորդեց եւս երկու հարձակում: Այսպիսով, սա դիտավորյալ հարձակում էր Ադրբեջանի դիվանագիտական առաքելության վրա», - ասել է Ադրբեջանի նախագահը:

Ալիեւի խոսքով՝ ադրբեջանական կողմը կարող է գործել միայն դիվանագիտական միջոցներով եւ ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ քայլերը, «բայց, իհարկե, սա համարվում է Ադրբեջանի նկատմամբ անբարյացակամ գործողություն»:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը պատասխանել է, որ ուկրաինայում ադրբեջանական թիրախների դեմ հրթիռային հարվածների ենթադրյալ նպատակային բնույթի մասին Ալիեւի հայտարարություններն իրականությանը չեն համապատասխանում: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը նշել է, որ, մասնավորապես, 2025 թվականի նոյեմբերին Մոսկվայում Ադրբեջանի դեսպանը «խորին ափսոսանք է հայտնել» Կիեւում Ադրբեջանի դիվանագիտական առաքելության շենքերին եւ տարածքին հասցված վնասի համար՝ դա վերագրելով ուկրաինական հակաօդային պաշտպանության «ոչ կոռեկտ աշխատանքին»:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ ադրբեջանական կողմին տեղեկացվել է, որ ռուսական ուժերը «հարվածում են օրինական ռազմական թիրախներին»՝ հաշվի առնելով օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների գտնվելու վայրերը:

2025 թվականի հուլիսին Ռուսաստանը հրթիռային հարված է հասցրել Կիեւում Ադրբեջանի դեսպանատանը հարակից շենքերին: Մեկ ամիս անց՝ օգոստոսի 28-ի գիշերը, Կիեւի վրա ռուսական հարձակման ժամանակ, հրթիռներից մեկի հարվածային ալիքից վնասվել է Ադրբեջանի դեսպանատան շենքը: Կոտրվել է մի քանի պատուհան, իսկ հյուպատոսական հատվածի տանիքին ճաքեր են առաջացել: Այնուհետեւ Ադրբեջանի դեսպանատան շենքը վնասվել է նոյեմբերի 14-ի գիշերը ռուսական հարձակման ժամանակ ընկած բեկորներից:

ՀԱՍՏԱՏՈՒՄ Է

Իսրայելի կառավարությունը հաստատել է մի քանի նախարարների առաջարկը՝ սկսելու Արեւմտյան ափին հողերի գրանցման գործընթացը, ինչը պաղեստինցիներն անվանում են իրենց տարածքների «փաստացի անեքսիա»: Այս մասին հայտնում է Reuters-ը: Սա 1967 թվականից ի վեր առաջին նման որոշումն է, որը նպատակ ունի լուծել Արեւմտյան ափում հողերի սեփականության վեճերը: Որոշման հիման վրա Իսրայելի արդարադատության նախարարության հողային գրանցամատյանի մարմինը կստանա լրացուցիչ ֆինանսավորում, լիազորություններ եւ անձնակազմ՝ պետական գրանցամատյանում հողամասերի գրանցման գործընթացը կազմակերպելու համար: «Մենք ամրապնդում ենք վերահսկողությունը մեր տարածքի բոլոր հատվածներում»,- նշել է Իսրայելի ֆինանսների նախարար Բեզալել Սմոտրիչը: Պաշտպանության նախարար Իսրայել Կացը նշել է, որ հողերի գրանցումը կենսական անվտանգային միջոցառում է: Իսկ կառավարության հայտարարության մեջ նշվում է, որ դա «համապատասխան արձագանքն է Պաղեստինի ինքնավարության կողմից խրախուսվող հողերի անօրինական գրանցման գործընթացին»: Պաղեստինի նախագահի գրասենյակը դատապարտել է այս քայլը՝ նշելով, որ այն «գրավյալ պաղեստինյան տարածքի փաստացի անեքսիա է»:

Արեւմտյան ափի մեծ մասը գտնվում է Իսրայելի ռազմական վերահսկողության տակ, իսկ որոշ տարածքներում կա սահմանափակ պաղեստինյան ինքնավարություն:

● *Հանրապետությունում անցած մեկ շաբաթում հայտնաբերվել է 2 հետախուզվող, կամավոր ներկայացել են 2-ը:*

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2026թ-ի մարտի 3-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 5 լոտ՝ոսկյա ջարդոն 17.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 17.1գր), որից 13.1գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 12.5գր) 500 հարգի՝ 363.800 ՀՀ դրամ, 4.8գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 4.6գր) 585 հարգի՝ 156.600 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 520.400 ՀՀ դրամ: Թիվ 6 լոտ՝ ոսկյա ջարդոն 8.5գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 7.9գր), որից 6.6գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 6.4գր) 585 հարգի՝ 218.000 ՀՀ դրամ, 1.9գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 1.5գր) 500 հարգի՝ 43.600 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 261.600 ՀՀ դրամ: Թիվ 7 լոտ՝ ոսկյա ջարդոն 4.1գր ընդհանուր քաշով (զուտ քաշը 3.9գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 132.800 ՀՀ դրամ: Թիվ 8 լոտ՝ ոսկյա ջարդոն 2.8գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 2.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 85.000 ՀՀ դրամ: Թիվ 9 լոտ՝ ոսկյա ջարդոն 31.8գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 28.2գր), որից 10.8գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 9.2գր) 500 հարգի՝ 267.700 ՀՀ դրամ, 21գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 19գր) 585 հարգի՝ 647.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 914.700 ՀՀ դրամ: Թիվ 10 լոտ՝ոսկյա ջարդոն 14.5գր ընդհանուր քաշով 860 հարգի, լոտի մեկնարկային գինը 725.000 ՀՀ դրամ: Թիվ 11 լոտ՝ ոսկյա զարդ 32.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 32.7գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 1.113.600 ՀՀ դրամ: Թիվ 12 լոտ՝ ոսկյա ջարդոն 20.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 20գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 681.100 ՀՀ դրամ: Թիվ 13 լոտ՝ոսկյա ջարդոն 8.4գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 6.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 221.300 ՀՀ դրամ: Թիվ 14 լոտ՝ոսկյա զարդեր 42.6գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 41.7գր), որից 36.4գր ընդհանուր քաշով ոսկյա զարդեր(զուտ քաշը 35.5գր) 585 հարգի՝ 1.209.000 ՀՀ դրամ, 6.2գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ 958 հարգի՝ 345.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.554.700 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից
Հեռ. +374 43004227

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

ԲԻԶՆԵՍԻ ԿԱՅՈՒՆ ԱՃ AEB-ԼԻԶԻՆԳԻՑ

Հայէկոնոմբանկն առաջարկում է առեւտրային եւ գյուղատնտեսական լիզինգ՝ հնարավորություն ընձեռելով իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին եւ ֆիզիկական անձանց զարգացնել, ավտոմատացնել եւ մասշտաբավորել իրենց բիզնեսը:

Առեւտրային լիզինգի շրջանակում իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերին առաջարկվում է 9.50%-ից մինչեւ 14.75% տարեկան անվանական տոկոսադրույքով (փաստացի տոկոսադրույքը՝ 9.71%-ից մինչեւ 18.05%) դրամային ֆինանսավորում լիզինգի առարկայի արժեքի նվազագույնը 10% կանխավճարով՝ 12-60 ամիս ժամկետով:

Գյուղատնտեսական լիզինգն իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին եւ ֆիզիկական անձանց տրամադրվում է նույն տոկոսադրույքով, լիզինգի առարկայի արժեքի նվազագույնը 20% կանխավճարով՝ 12-84 ամիս ժամկետով:

Ինչպես առեւտրային, այնպես էլ գյուղատնտեսական լիզինգի դեպքում ֆինանսավորման սահմանաչափը 3-250 մլն դրամ է:

Այսօր լիզինգը մեծ պահանջարկ ունեցող ֆինանսական գործիք է, որի նկատմամբ հետաքրքրությունն օրեցօր աճում է: Լիզինգը թույլ է տալիս խուսափել մի շարք ռիսկերից՝ իրականացնելով նպատակային ֆինանսավորում: Հաճախորդների համար գրեթե վերանում է պարտադիր գրավի պայմանը, ինչը հաճախ խոչընդոտում է միջոցների ներգրավմանը:

Հայէկոնոմբանկն աշխատում է նաեւ լիզինգի պետական աջակցության բոլոր ծրագրերի շրջանակում՝ ըստ պետության կողմից սահմանված սուբսիդավորման տոկոսադրույքների: Տարեկան անվանական տոկոսադրույքի սուբսիդավորման չափը գյուղատնտեսական լիզինգի դեպքում մինչեւ 14% է, իսկ առեւտրային լիզինգի դեպքում՝ 8%, ժամկետը՝ 12-84 ամիս:

Լիզինգն արդյունավետ լուծում է բոլոր նրանց համար, ովքեր ձգտում են արդիականացնել իրենց բիզնեսը, բայց խուսափում են ավանդական վարկավորումից եւ դժվարանում են միայնակ անցնել տեխնիկայի կամ սարքավորումների ձեռքբերման բարդ ուղին:

Հայէկոնոմբանկը պատրաստ է նպաստել տնտեսվարողների բիզնեսի կայուն աճին՝ առաջարկելով ֆինանսավորում լիզինգի տեսքով:

AEB-Լիզինգի մանրամասներին կարող եք ծանոթանալ այստեղ՝

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԼՈՒՐԵՐ

ԿԱՄՈՒՐՋ ԿԴԱՌՆԱ

IDBank-ն արդեն ավելի մոտ է Կալիֆորնիայի մեր հայրենակիցներին: Բանկը ներկայացուցչություն է բացել Կալիֆորնիայի Գլենդել քաղաքում:

IDBank-ի վարչության նախագահ Միեր Աբրահամյանի խոսքով՝ ներկայացուցչությունը կամուրջ կդառնա սփյուռքահայ մեր հայրենակիցների եւ IDBank-ի միջեւ: «Գտնվելով ԱՄՆ-ում՝նրանք կարող են հեռավար դառնալ IDBank-ի հաճախորդ եւ օգտվել ծառայություններից, օրինակ՝ հաշիվ բացել, հիփոթեքային վարկ ձեւակերպել, ներդնել ավանդ, եւ այս ամենը հնարավոր է Բանկի լիարժեք թվայնացման եւ աշխարհի ցանկացած կետից հասանելի լինելու շնորհիվ: Ներկայացուցչություն բացելու մեր նպատակն է ԱՄՆ-ում գտնվող մեր պոտենցիալ հաճախորդներին ներկայացնել բանկի ընթացիկ եւ նոր պրոդուկտները, հաստատել եւ պահպանել մեր հաճախորդների հետ կապը»,-ասել է Միեր Աբրահամյանը:

IDBank-ի ներկայացուցչության հետ հաճախորդները կարող են կապ հաստատել հեռախոսով, ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, իսկ հաճախորդ դառնալու եւ Բանկի ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ կլինի այցելել IDBank-ի պաշտոնական կայք:

IDBank-ի Պրեմիում բանկային ծառայությունների վարչության ղեկավար Լիդա Սաֆարյանի խոսքով՝ IDBank-ը շարունակաբար ներդրումներ է իրականացնում իր հաճախորդների հարմարավետությունն ու ֆինանսական պահանջները բավարարելու համար: Մենք ուսումնասիրեցինք ԱՄՆ-ում բնակվող մեր հայրենակիցների պահանջները եւ եկանք եզրակացության, որ մեր IDBank-ի ծառայությունների մասին անհրաժեշտ է պատմել այստեղ՝ Կալիֆորնիայում, քանի որ մեր հայրենակիցներից շատերն, օրինակ, ուզում են Բանկի ֆինանսավորմամբ բնակարան գնել Հայաստանում, սակայն չգիտեն, թե ինչ պայմաններում են գործում կամ ինչպես կարող են դիմել: Մեզ հետ կապվելով՝նրանք կստանան առաջնային անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ հետագա քայլերն արդեն կարող են իրականացնել IDBank-ի կայքի միջոցով՝ հեռավար, ասել է Լիդա Սաֆարյանը:

IDBank-ի ներկայացուցչության հետ կարելի է կապվել +1-559-599-3333 հեռախոսահամարով: Ներկայացուցչությունը գտնվում է Գլենդել քաղաքի սրտում, եւ առաջնային զանգ զանգից հետո արդեն Ձեզ համար ըստ անհրաժեշտության կնշանակվի հանդիպում հենց գրասենյակում:

Այսպիսով, IDBank-ը, հայաստանյան ծավալուն գործունեությունից բացի, ընդլայնվում է նաեւ արտերկրում, ինչը համահունչ է ID Group ընկերությունների խմբի՝ միջազգային էքսպանսիայի ռազմավարությանը:

IDBank-ի ներկայացուցչությունը ԱՄՆ-ում չի տրամադրում բանկային ծառայություններ եւ չի իրականացնում հաճախորդների սպասարկում:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԿԱՇԱՌՔԻ ԴԵՊՔ

Հայաստանի հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ մինչեւ 2025 թվականի հունիսը ՀՀ ՆԳՆ Շիրակի մարզի ստորաբաժանումներից մեկում պաշտոն զբաղեցրած անձը, ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, կաշառքի միջնորդության պատրվակով դրամական միջոցներ է ստացել: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն:

Մասնավորապես, Շիրակի մարզի Գյումրի քաղաքի բնակիչը վարորդական իրավունքի վկայական ձեռք բերելու համար դիմել է նշված պաշտոնատար անձին, իսկ վերջինս, վստահեցնելով, թե ունի ծանոթ պաշտոնյաներ, ովքեր կարող են կաշառքի դիմաց 20 օրվա ընթացքում անօրինական կերպով վարորդական իրավունքի վկայական տրամադրելու գործընթացը կազմակերպել, կաշառքի միջնորդության պատրվակով Գյումրի քաղաքի բնակչից 2025 թվականին ստացել է ընդհանուր շուրջ 600.000 ՀՀ դրամ:

Ոստիկանության նախկին աշխատակիցը, սակայն, գումարը ստանալուց հետո այն որեւէ պաշտոնատար անձի չի փոխանցել եւ միջոցներ չի ձեռնարկել տրված խոստումը կատարելու ուղղությամբ: Նրան մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 440-րդ հոդվածի 3-րդ մասով՝ կաշառքի միջնորդության պատրվակով գումար ստանալու համար:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵԾ ՊԱՀՔ

ԱՆԱՊԱՏԻՑ ԴԵՊԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍ

Փետրվարի 16-ից սկսվում է Մեծ Պահքը: Այն տեւում է 48 օր՝ Բուն Բարեկենդանից մինչեւ Սուրբ Հարության տոն (Զատիկ):

Մեծ Պահքը լավագույն առիթն է ինքնամաքրման, ինքնազոհաբերման, ապաշխարության, մաքրակենցաղության եւ ինքնազսպման համար: Մեծ Պահքի հենց առաջին օրը հաշտության, համերաշխություն սահմանելու օր է, գժտություններն ու թշնամությունները մեղմելու, միմյանց միջեւ բարեկամական հարաբերությունները վերականգնելու առիթ: Այս գործում լծված են եղել միջնորդները, որոնք հանդիպեցնում էին անգամ թշնամիներին:

Իսկ ինչո՞ւ է պահքը տեւում 48 օր, բայց կոչվում 40-օրյա: Պետք է հիշել, որ Մեծ Պահքի 40 օրը խորհրդանշում է անապատում Քրիստոսի քառասնօրյա աղոթքի, ծոմապահության եւ ապաշխարության շրջանը: Իր մկրտությունից հետո Հիսուս «հոգով անապատ առաջնորդվեց ու քառասուն օր փորձվեց սատանայից: Չկերավ ու չխմեց այն օրերին» (Ղուկ. 4:1-3):

Քառասնօրյա պահքին հաջորդում է պահոց եւս մեկշաբաթյա շրջան՝ Ավագ շաբաթը: Այդ է պատճառը, որ քառասնօրյա կոչվող պահքը 48 օր է տեւում:

Մեծ Պահքն ունի յոթ կիրակի, յոթ հիշարժան օրեր՝ Բուն բարեկենդան, Արտաքսում, Անառակի, Տնտեսի, Դատավորի, Գալստյան եւ Ծաղկազարդ:

Մեծ Պահքը կիսվում է միջինքով: Պահքն այդ օրը չեն ընդհատում: Պարզապես ժողովրդական սովորության համաձայն՝ այդ օրը բաղարջից պահոց գաթա են պատրաստում:

Մեծ Պահքի շրջանում վաղնջական կանոններով արգելված են եղել պսակադրությունները եւ մատաղը: Սակայն Վազգեն Ա կաթողիկոսի շրջաբերականով խիստ անհրաժեշտության դեպքում թույլատրվեց պսակադրություն կատարել Մեծ Պահքի շաբաթ եւ կիրակի օրերին, բացառապես Ավագ շաբաթվա բոլոր օրերի:

Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերք:

Պահքի ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլեւ մոլի սովորություններից, շատախոսությունից, ստախոսությունից, հայհոյանքից եւ այլ մեղքերից:

Պետք է նաեւ հիշել, որ կերակրից հրաժարվելն առանց մեղքից հետ կանգնելու՝ անիմաստ ու անօգուտ է, որովհետեւ «սատանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում եւ չի հոգնում» (Սուրբ Գրիգոր Տաթեւացի):

Հիսուս իրեն ծոմապահության ենթարկեց մարդկության փրկության համար: Մարդկանց փոխարեն Հիսուս ապաշխարեց, որպեսզի բոլոր պահեցողություն անողների ապաշխարանքն իմաստ եւ իրականություն ստանան՝ շնորհիվ իր ծոմապահության:

Միշտ հիշե՛ք՝ պահք պահում ենք մենք մեզ համար, մեր մեղքերից, վատ սովորություններից ազատվելու համար, այլ ոչ ցուցադրության համար: Մատթեոս 6:16-18-ում գրված է. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երեւան, թե ծոմ են պահում, ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը, այսինքն՝ մարդկանց երեւալը եւ նրանցից գովվելը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի քո գլուխը եւ լվա քո երեսը, որպեսզի չերեւաս մարդկանց ծոմ պահող, այլ քո Հորը, գաղտնաբար, եւ քո հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԸ

«Սպորտի կառավարման կենտրոն»-ում ավարտվեց Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց 2026 թվականի առաջնությունը: Մրցումային վերջին օրը պայքարի մեջ մտան 94 կգ, 110 կգ ու գերծանր քաշային կարգի մարզիկները: 94 կգ քաշային կարգում Հայաստանի չեմպիոն դարձավ Արա Աղանյանը (երկամարտ՝ 370 կգ), երկրորդ տեղում Դավիթ Հովհաննիսյանն է (երկամարտ՝ 361 կգ) եւ եռյակի վերջում Մնացական Աբրահամյանն է (երկամարտ՝ 340 կգ): 110 կգ քաշում Հայաստանի չեմպիոնը Եվրոպայի կրկնակի ոսկե մեդալակիր Գարիկ Կարապետյանն է (երկամարտ՝ 380 կգ), երկրորդ եւ երրորդ տեղերը հաջորդաբար զբաղեցրել են Գրիգոր Ղազարյանը (երկամարտ՝ 333 կգ) ու Նարեկ Անտոնյանը (երկամարտ՝ 317 կգ): Գերծանր քաշային կարգում անգերազանցելի առաջատարն է աշխարհի եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն, Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր Վարազդատ Լալայանը (երկամարտ՝ 440 կգ): Արծաթե մեդալակիր դարձավ Սիմոն Մարտիրոսյանը (երկամարտ՝ 405 կգ), իսկ բրոնզե՝ Աշոտ Մովսիսյանը (երկամարտ՝ 377 կգ):

ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆ

«Բարսելոնայի» գլխավոր մարզիչ Հանս-Դիտեր Ֆլիկը խիստ դժգոհություն է հայտնել մրցավարական աշխատանքից Իսպանիայի Գավաթի կիսաեզրափակչի՝ «Ատլետիկոյի» դեմ կայացած խաղում: Մադրիդում կայացած հանդիպումն ավարտվել է տանտերերի ջախջախիչ հաղթանակով՝ 4:0 հաշվով: Հանդիպման 52-րդ րոպեին մրցավարները չեղարկել են կատալոնացիների պաշտպան Պաու Կուբարսիի խփած գոլը: «Ջուլիանո Սիմեոնեն պետք է դեղին քարտ ստանար Ալեքս Բալդեի նկատմամբ թույլ տված առաջին խախտման համար: Դա կարող էր փոխել ամբողջ խաղի ընթացքը: Պետք է լիներ նաեւ երկրորդ դեղին քարտը: Ինչ վերաբերում է Կուբարսիի չեղարկված գոլին, ապա որքա՞ն մենք սպասեցինք որոշմանը. յո՞թ րոպե: Իմ կարծիքով՝ դա խաղից դուրս վիճակ չէր: Երբ գոլը չեղարկեցին, մեզ ոչինչ չբացատրեցին, ոչ մի կոմունիկացիա չեղավ: Ես չեմ հասկանում՝ ինչու էր դա խաղից դուրս: Սա խայտառակություն է եւ աղետ»,- գերմանացի մասնագետի խոսքերն է մեջբերում As-ը:

«ԱՐՑԱԽ»-Ը ԳԵՂԱՍԱՀՔՈՒՄ

Առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է Ձմեռային Օլիմպիական խաղերում գեղասահքի մարզաձեւում: Փետրվարի 15-ին 2026 Winter Olympics-ի շրջանակում գեղասահքի մրցումները անցկացվեցին Միլանում՝ Milano Ice Skating Arena մարզադաշտում: Հայաստանի ներկայացուցիչներ Կարինա Ակոպովան եւ Նիկիտա Ռախմանին հաջողությամբ հաղթահարեցին կարճ ծրագրի փուլը եւ որակավորվեցին ազատ ծրագրին՝ ցուցադրելով վստահ եւ բարձր մակարդակի կատարում: Հիշեցնենք, որ Միջազգային օլիմպիական կոմիտեի որոշմամբ ծրագրից հեռացվել էր «Արցախ» ստեղծագործության անվանումը: Չնայած այդ հանգամանքին՝ մեր մարզիկները հանդես եկան հոյակապ ելույթով՝ արժանանալով ջերմ ընդունելության: Հայաստանի համար սա կարեւոր եւ պատմական քայլ է ձմեռային մարզաձեւերում:

ԱՇԽԱՐՀ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԿՈ

Մոսկվայում Հայաստանի դեսպանության մշակույթի կենտրոնում տեղի է ունեցել ստեղծագործական երեկո՝ նվիրված մեծանուն կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի ծննդյան 105-ամյակին:

Այն կազմակերպվել է Առնո Բաբաջանյանի հիշատակի միջազգային հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում:

Երեկոյի ընթացքում կայացել է հանդիպում լեգենդար կոմպոզիտորի որդու՝ Արա Բաբաջանյանի հետ, որը ներկաներին ներկայացրել է հոր կյանքի ու գործունեության հետաքրքիր դրվագներ, ինչպես նաեւ խոսել նրա ստեղծագործական ուղու եւ երաժշտական ժառանգության նշանակության մասին:

ՌԴ-ում ՀՀ դեսպանության մշակույթի կենտրոնի տնօրեն Վլադիմիր Գաբբեն իր ելույթում առանձնակի ընդգծել է մի ողջ ժամանակաշրջան մարմնավորած եւ ազգային ու համաշխարհային երաժշտարվեստում նշանակալի հետք թողած կոմպոզիտորի ավանդը: Նրա խոսքով՝ նման նախաձեռնությունները ոչ միայն հարգանքի տուրք են մեծ արվեստագետի հիշատակին, այլեւ կարեւոր քայլ Առնո Բաբաջանյանի ստեղծագործական հարուստ ժառանգության պահպանման, արժեւորման եւ լայն հանրահռչակման ուղղությամբ:

Երեկոյի ընթացքում հնչել են Առնո Բաբաջանյանի ստեղծագործություններից ընտրված գործեր, որոնք ներկայացրել են մենակատարներ Սուրեն Պլատոնովը, Արսեն Ստեփանյանը, Վյաչեսլավ Օլխովսկին եւ Ֆլորա Նազարյանը՝ արժեւորելով մեծ կոմպոզիտորի հարուստ ու բազմաժանր երաժշտական ժառանգությունը:

Միջոցառմանը ներկա էին Մոսկվայի ստեղծագործական եւ գիտական շրջանակների ներկայացուցիչներ, արվեստասերներ եւ համայնքային գործիչներ:

ԲԻԼԻԱՐԴԸ՝ 265,400 ԴՈԼԱՐ

Եթե կարծում էիք, որ բիլիարդը պարզապես խաղ է, Hermes-ը պատրաստ է կոտրել ձեր պատկերացումները: Ֆրանսիական նորաձեւության տունը ներկայացրել է 8 ոտնաչափ երկարությամբ Off Piste ամերիկյան բիլիարդի սեղանը՝ ուղեղահայաց անգլիական տարբերակով, որի գինը 265,400 դոլար է:

Այս սեղանը յուրահատուկ է դարձնում դասական ուրվագծի եւ անթերի վարպետության համադրությունը՝ անփայլ կաշվե բարձիկներ, կաշվե պատյան, Taurillon Regate կաշվից գրպան եւ քանդակված լաքապատ ոտքեր: Հավաքածուն ներառում է չորս կի, կաշվե պատյանով բիլիարդի կավիճ եւ Hermes պատյան:

Աքսեսուարները եւս վերածվում են դիզայնի առարկաների՝ բակելիտե կյուերի դարակ՝ լաքապատ ծածկույթով եւ կաշվե մանրամասներով, փայլեցված եղջյուրի ձողերով եւ թխկու բռնակներով կյուեր՝ փաթաթված Taurillon Regate կաշվով, լրացված մետաղական օղակներով եւ ճշգրիտ կարերով:

Լյուքս խաղային սեղանների աշխարհում Hermes-ը միակը չէ, բայց նրա կատարման մակարդակը ամենաբարձրն է: Louis Vuitton-ը առաջարկում է ավելի մինիմալիստական սեղան զգալիորեն ցածր գնով, մինչդեռ Bugatti-ն եւ IXO-ն ստեղծել են ածխածնային մանրաթելից պատրաստված սեղան սուպերզբոսանավերի համար՝ գիրոսկոպիկ ինքնահավասարեցման համակարգով:

● Փետրվարի 17-ին՝ ժամը 12:00-ին, Հովհաննես Թումանյանի անվան Ազգային տիկնիկային թատրոնում տեղի կունենա «Անխելք մարդը» ներկայացումը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որոնք են խնամքի տրամադրման տեսակները: Ո՞վ իրավունք ունի օգտվելու խնամքի ծառայություններից:

Լիլիթ Գասպարյան, 46 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Լ. Գասպարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ խնամքը տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր կամ հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններում եւ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում տրամադրվում է ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին, որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է ուսուցիչը դիմել տարակարգ ստանալու համար:

Աշոտ Հովհաննիսյան, 39 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2022թ. փետրվարի 9-ի ՀՕ-35-Ն օրենքի ուժի մեջ է մտել 2022թ. մարտի 3-ից, որով սահմանվել են փոփոխություններ նաեւ ուսուցիչների տարակարգի շնորհման գործընթացում:

Համաձայն վերոգրյալ օրենքի պահանջների՝ մարտի 3-ից սկսած՝ տարակարգի շնորհման գործընթացը կիրականացվի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից օրենքով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունելուց հետո, որով կսահմանվեն տարակարգի շնորհման համար ուսուցչի մասնագիտական չափանիշները:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է տարակարգի շնորհման համար դիմում ներկայացնել ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Սեւան-Երեւան ավտոճանապարհին

Սիսն ու Մասիսը, Արարատյան դաշտի վրա կանգնած, պատմություն են պատմում ժամանակի անաղմուկ մառախուղում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 - 5 + 4 + 8
	Կոտայքի լեռներ	0 - 4 + 5 + 8
	Կոտայքի նախալեռներ	+ 1 + 2 + 9 + 12
	Գեղարքունիք	0 - 4 + 4 + 8
	Լոռի	- 1 + 4 + 14 + 17
	Տավուշ	0 + 4 +14 + 18
	Արագածոտնի լեռներ	- 2 - 5 + 4 + 8
	Արագածոտնի նախալեռներ	0 + 4 + 9 + 14

	Արարատ	+ 2 + 5 +12 + 15
	Արմավիր	0 + 4 +13 + 16
	Վայոց ձորի լեռներ	- 2 + 2 + 6 + 9
	Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 5 +13 + 16
	Սյունիքի լեռներ	- 1 - 4 + 4 + 7
	Սյունիքի նախալեռներ	0 + 4 +15 + 18
	Սյունիքի հովիտներ	+ 5 + 10 +19 + 23
	Երեւան	+ 2 + 4 + 13 + 15

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*